

ՀՐԱԶ ԲԱՐԹԻԿՅԱՆ

ՄԵԾ ԼԱՎՐԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ (ՊՌՈՏՈՍ) ԹԵՈԿՏԻՍՏՈՍԻ
ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Աթոնում հայ ֆաղկեղոնականների գործունեության հարցի շուրջը)

Բյուզանդական մշակույթի պատմության մեջ Աթոնը (Սուրբ Լեոն) հրապակական դեր է խաղացել: Դարերի ընթացքում այնտեղ հիմնադրված վանքերի ու մենաստանների հարուստ մատենադարանները մինչև օրս էլ գիտնականներին անհատնում նյութ են մատակարարում բյուզանդական կյանքի ամենատարբեր կողմերը լուսաբանելու համար:

Աթոնի թերակղզին վաղուց էր ձգում աշխարհիկ կյանքից հրաժարված բազմաթիվ մարդկանց: Առաջին ճգնաժողովներն այստեղ հանդես են գալիս դեռ III դարում: Նրանց թիվը զնալով աճում էր:

Աթոնի թերակղզու հյուսիսային մասում, Մեզալի Վիզլա կոչված տեղում Հովհաննես Կոլովոսը IX դարի երկրորդ կեսին հիմնադրում է Սուրբ Լեոն առաջին վանքը: Բայց վանական կազմակերպված համայնքներն այստեղ հանդես են գալիս միայն X դարից սկսած: X դարում Աթոնում արդեն կար 56 վանք, XIII դարում նրանց թիվը հասել էր 180-ի:

Աթոնի վանական կազմակերպության հիմնադրումը կապվում է հայազգի Նիկեփոր II Փոկաս կայսեր (963—969 թթ.) անվան հետ: Նա իր մորեղբոր՝ Միքայել Մալեինոսի՝ Թեսալիայի Կյումենա կոչված վանքի վանահոր մտերիմ սբ. Աթանասիոսի միջոցով և ջանքերով 963 թ. հիմնադրում է Մեծ Լավրա վանքը: Աթանասիոսն այնտեղ կառուցում է նաև բազմաթիվ խուցեր, որոնցից մեկը նախատեսված էր Նիկեփոր II Փոկասի համար, որը ցանկություն էր հայտնել հետագայում հրաժարվել գահից և վանականի սքեմ հագնել:

Նիկեփոր Փոկասի հաջորդ՝ նույնպես հայազգի Հովհաննես Չմշկիկ (969—976 թթ.) կայսեր կարգադրությամբ կազմվում է Սուրբ Լեոն առաջին կանոնադրությունը (Տիպիկոն), որը և հաստատվում է կայսեր կողմից 971 թ.:

Դեռևս սբ. Աթանասիոսի ժամանակ Աթոնի վանքը աչքի էր ընկնում իր անդամների էթնիկական խաչաբազմաթիվությամբ: Բացի հույներից, այստեղ կային հույներից դավանակից վրացիներ և վրացազավան հայեր (հայ-քաղկեդոնիկներ): Վերջիններս աղբյուրներում պարզապես վրացիներ են կոչվում¹ (Վթղբշ): Կային նաև Իտալիայից եկած լատիններ:

¹ Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. Отдельный оттиск из «Византийского Временника», том XII, 1905, стр. 40.

X դարի վերջում, դեռևս սբ. Աթանասիոսի կենդանության օրոք, հիմնադրվում է Իվիրոն վանքը, որի առաջին անդամներից մեկն է դառնում Հովհաննես-Քոռնիկը², ինչպես և նրա եղբայր Վարազվաշեն³:

Այնուհետև Աթոնում կառուցվում են բազմաթիվ վանքեր, որոնցից նշանավոր է Վատոպեղիոնի վանքը: Ահա Աթոն լեռան բազմաթիվ վանքերից ամենանշանավոր դերը խաղացել են վերոհիշյալ երեքը՝ Լավրան, Իվիրոնը և Վատոպեղիոնը, որոնցից յուրաքանչյուրը պաշտոնապես կոչվել է «Մեծագույն վանք» (μεγίστη γυνή):

Հայ միջնադարի պատմությամբ զբաղվող մասնագետի համար, անտարակույս, կարևոր է իմանալ, թե ինչպիսի դեր են խաղացել հայերը Աթոնում: Այդ մասին աղբյուրները, զժրախտաբար, շատ քիչ նյութ են մատակարարում և պատահական չէ, որ ուսումնասիրողները հիմնականում բավարարվել են Չորավանեկի վերոհիշյալ սրդիների՝ Վարազվաշեի և Հովհաննես-Քոռնիկի խաղացած դերի ուսումնասիրությամբ⁴: Պետք է ասել, սակայն, որ կողմնակի տվյալները մեզ իրավունք տալիս էին այդ ուղղությամբ փնտրտուքներ կատարելու:

* * *

Դարերի ընթացքում Աթոնի վանքերում կուտակվել են հսկայական քանակությամբ ձեռագիր մատյաններ, որոնց ուսումնասիրության գործով զբաղվել և զբաղվում են բազմաթիվ մասնագետներ: Լավրայի վանքի մատենադարանում, օրինակ, պահվում է շուրջ 2500 ձեռագիր մատյան, Վատոպեղիոնում՝ 1200, Իվիրոնում՝ 1500: Աթոնի բոլոր վանքերում միասին վերցրած կա շուրջ 12.000 ձեռագիր: Բացի ձեռագիր մատյաններից, այնտեղ պահվում են անգնահատելի արժեք ներկայացնող հսկայական քանակությամբ կալսերական, պատրիարքական հրովարտական, կարգադրություններ, անտեսական փաստաթղթեր և այլն:

Լավրայի վանքի մի հունարեն փաստաթուղթ իր ոչ հունարեն մի քանի

² Կարինի մոտ պահպանվել է խաչքարի վրա գրված նրա հայերեն վիմագիր արձանագրությունը, որտեղ գրված է. «(Յ)անուն Աստուծոյ եւ Յովանէ... որդի Չորավանեկի կանգնեցի զխաչս զայս ի ժամանակին Վասիլէ (կարգա՛ Վասիլ և) Կոստանդին...»: Առաջին անգամ հրատարակել է Ն. Սարգսյանը: Տե՛ս նրա Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 79: Արձանագրության ճշգրտված ընթերցումը տվել է Ն. Ակիևյանը: Տե՛ս նրա Քոռնիկյանց ճյուղագրությունը: Մատենագրական հետազոտություններ, հտ. Գ, Վիեննա, 1938, էջ 62: Նաև՝ N. Adontz, Tornik le Moine, In Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 309. Հովհաննես-Քոռնիկը Աթոնի վանքին նվիրել է իր կարգադրությամբ 977-ին և 981-ին գրված երկու վրացերեն ձեռագիր մատյաններ:

³ Անիում պահպանվել է Վարազվաշեի հայերեն վիմագիր արձանագրությունը, որտեղ գրված է. «Յանուն Աստուծոյ եւ Յովանէ Վարազվաշէ որդի Չորավանիկի կանգնեցի զխաչս»: Տե՛ս Ն. Ակիևյան, նշ. աշխ., էջ 66:

⁴ Ն. Ակիևյան, նշ. աշխ.: նաև՝ P. Peeters, Un colophon géorgien de Tornik le Moine, Analecta Bollandiana, t. L, fasc. 3-4. Ավելի հանդամանալից՝ N. Adontz, Tornik le Moine, pp. 297-318.

բառերով ահա պատճառ դարձավ սույն հողվածի հանդես գալուն⁵: Փաստաթուղթը կազմված է մագաղաթի վրա (433×405 մմ.) աշխարհի արարչագործության 6543 թվականի (մ. թ. 1035 թ.) ապրիլին Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսի կողմից և մի կարգադրություն է, որի համաձայն վանական և քահանա Վասիլիոսը նշանակվում է սբ. Նիկողայոս վանքի վանահայր: Նրա տեղակալ է նշանակվում ոմն Գերասիմոս, որը, Վասիլիոսի հայեցողությամբ կարող է հաջորդել վերջինիս, բայց եթե Վասիլիոսը գտնի, որ Գերասիմոսը դրան արժանի չէ, ապա իրեն հաջորդ կարող է նշանակել մեկ ուրիշի: Փաստաթղթի տակ ստորագրել են Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսը և այլ վանքերի 24 ներկայացուցիչներ:

Առաջնորդը, պարզ է, ստորագրել է առաջինը. + ΘΕΟΚΤΗΣΤΟΣ, բայց իր հունարեն ստորագրության անմիջապես տակը նպատակահարմար է գտել գրել հայերեն. «Իմ ձեռքս գրեցի Թեոկտիստոս +»: Ե՛վ ստորագրության տեղը (առաջնորդի հունարեն ստորագրության անմիջապես տակը), և՛ անունների համընկնելը, մեր կարծիքով, որևէ կասկած չի թողնում, որ ΘΕΟΚΤΗΣΤΟΣ-ը հայ է: Ստորագրությունից հետո փոքր խաչ է գրված, ինչպես և Թեոկտիստոսի հունարեն ստորագրությունից առաջ:

+ ΘΕΟΚΤΗΣΤΟΣ ΑΥΤΟΥ
 Ի Կարգի ԸՕԻՅՈՒՐ ԵՆՏԵՆՈՒՔ ՍՉԵՆԻՍՏՈՒՆԳԿՍԻՏ

Թեոկտիստոսի վերոհիշյալ հայերեն ստորագրության մեջ հետաքրքրական է «աւ» երկբարբառի «ո»-ով փոխարինելը («ձեռքս» փխ. «ձեռաւքս»), «ք» տառի գրության ձևը և անվան վերջին 3 տառերի սղված գրությունը:

Քանի որ Աթոնում ընդհանրապես և Մեծ Լավրայում մասնավորապես հայ-միաբնակների առկայության մասին խոսք չի եղել չի կարող, ապա պիտի ենթադրել, որ Թեոկտիստոսը հայ-քաղկեդոնիկ էր՝ «վրացի», ինչպես այն ժամանակ անվանում էին վրացադավան հայերին⁶:

Լավրային 1035 թ. փաստաթուղթը վկայում է, որ վրացադավան հայերը լայն գործունեություն էին ծավալել ոչ միայն Իվիրոն վանքում (այդ մասին մենք արդեն գիտեինք), այլ հենց Մեծ Լավրայում, այն էլ նրա հիմնադրումից ընդամենը 70 տարի անց:

⁵ Խորին շնորհակալություն ենք հայտնում ակադեմիկոս Paul Lemerle-ին (Collège de France, Փարիզ) խնդրո առարկա փաստաթղթի լուսանկարը մեզ տրամադրելու համար: Փաստաթուղթը վերջերս հրատարակվել է „Archives de l'Athos“ ժառանգաբար 5-րդ հատորում (փաստաթուղթ № 29), „Actes de Lavra I, Des origines à 1204, par P. Lemerle, N. Svoronos, A. Guillou, avec la collaboration de D. Papachryssanthou, Paris, 1970, Փաստաթղթի ֆոտոպատճենը հրատարակված է նույն հատորին կցված սլյուծում (№ XXIII):

⁶ Այդ իմաստով բացառված չէ, որ Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունից առաջ հանդիպող Γεώργιος 6 *Դիք ստորագրության տեղը նույնպես վրացադավան հայ է եղել:



Մեծ Լավրացում 1035 թ. հազված փաստաթղթի ստորին մասի լուսանկար պատճենը

Խնդրո առարկա փաստաթղթի լույսի տակ հաստատվում և իմաստ են ստանում գրանից մտա կես դար հետո կազմված Գրիգոր Բաղուրյանի Պետրիցոսի վանքի կանոնագրության (Տիպիկոնի) վերջում գրված խոսքերը, թե այդ կանոնագրությունն «ստորագրվեց իմ կողմից»⁷ Արևմուտքի մեծ դոմեստիկոս, սեկստոս Գրիգոր Բաղուրյանի՝ հ ա յ ե ր ե ն տ առ եր ով⁸» (ὁ πεγράφη παρ' ἐμοῦ τε αὐτοῦ τοῦ σαβαστοῦ Γρηγορίου καὶ μεγάλου δομestικου τῆς δόσεως τοῦ Πακουριανοῦ διὰ ἀρμενικῶν γραμμάτων):

«Իմ ձեռքս գրեցի Քեոկտիստոս»: Մրանք առաջին հայերեն բառերն են, որ հայտնաբերվում են Աթոնում: Պիտի հուսալ, որ գրանք վերջինը շեն լինի: Հետախուզումներն այդ ուղղությամբ նոր փաստեր պիտի հանդես բերեն, որոնք պիտի հարստացնեն մեր գիտելիքները Աթոնում հայ-քաղկեդոնիկների խաղաղած դերի մասին:

Р. М. БАРТИКЯН

АРМЯНСКАЯ ПОДПИСЬ ПРОТА ВЕЛИКОЙ ЛАВРЫ ФЕОКТИСТА

(К вопросу о деятельности армян-халкедонитов на Афоне)

(Р е з ю м е)

Сведения о деятельности армян-халкедонитов (Ованнеса и Варзаче Торникянов) в Афонском монастыре Ивирон общеизвестны. Но один, пока что единственный в своем роде, важный документ, написанный на греческом языке и датированный 6543 г. от сотворения мира (1035 г.), свидетельствует о деятельности армян также в Великой Лавре. Под этим документом стоят 24 подписи монахов, первая из которых принадлежит проту Феоктисту, который, подписавшись по-гречески, счел необходимым подписаться и по-армянски: «Իմ ձեռքս գրեցի Քեոկտիստոս» (т. е. «Собственноручно подписал: Феоктист»).

В свете этой находки вновь подтверждается подлинность армянской подписи и другого видного деятеля—Григория Пакуриана, основателя Петриционского монастыря в Филиппополе, особо отмечающего, что он подписался под греческим текстом его устава (типика) по-армянски (διὰ ἀρμενικῶν γραμμάτων—„армянскими письменами“).

⁷ Մի թիշ հետո Գրիգոր Բաղուրյանը այդ խոսքերն արտահայտել է «օւշիւ շէրի ծննդագրա» («ձեռքս ստորագրեցի») բառերով, այսինքն այնպես, ինչպես Քեոկտիստոսը:

⁸ Տե՛ս «Сведения византийских писателей о Грузии», том V, греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1963, стр. 252.

H. M. BARTIKIAN

LA SIGNATURE ARMÉNIENNE DU PRÔTOS DE LA GRANDE
LAVRA THÉOKTISTOS

(Sur la question de l'activité des arméniens-chalcédoniens à Athos)

(Résumé)

Les données concernant les arméniens-chalcédoniens (Hovhannes et Varazvatché Thornikian) dans le monastère Ivron d'Athos sont bien connues. Cependant un document fort important, unique en son genre jusqu'à présent, écrit en grec en l'an 6543 de la création du monde (1035) témoigne de l'activité des arméniens également dans le monastère de la Grande Lavra. Ce document a été signé par 24 moines et la première de ces signatures appartient au prôtos^m Théoktistos qui, après avoir signé en grec, a trouvé nécessaire de signer également en arménien: «Եմ ձեռքս գրեցի թեոկտիստոս» («J'ai signé de ma propre main: Théoktistos»). Cette découverte confirme l'authenticité de la signature arménienne d'une autre personnalité éminente Grigor Bakourian (Grégoire Pakourianos), fondateur du monastère de Petritzos à Philippopolis, qui note en particulier qu'il a signé le texte grec du typikon du monastère en arménien (διὰ ἀρμενικῶν γραμμάτων—«en caractères arméniens»).